ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ՀԱՄԼԵՏ ՍԵՐԳԵՅԻ

ԿՅԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ՈՐՊԵՍ ՍԵՐՈՒՆԴՆԵՐԻ ՀԱՄԱԿԵՑՈՒԹՅԱՆ ԳՈՅԱԲԱՆԱԿԱՆ ԿԱՐԳ

Թ.00.01 «Փիլիսոփայություն» մասնագիտությամբ
փիլիսոփայական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2025

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանի փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի գիտական խորհրդում:

Գիտական ղեկավար՝ փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Էդ. Ա. Հարությունյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Հ. Սարգսյան

փիլիսոփայական գիտությունների թեկնածու Ա. Ղ. Բալայան

Առաջատար կազմակերպություն՝ Վալերի Բրյուսովի անվան պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2025թ. հունիսի 4-ին՝ ժամը 15:00-ին, Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲԿԳԿ-ի Փիլիսոփայության և սոցիոլոգիայի 013 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցե՝ 0025, ք. Երևան, Աբովյան 52ա:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2025թ. ապրիլի 9-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝ փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ Ա. Լ. Ղարագուլյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Քաղաքակրթական և սոցիոմշակութային արմատական փոխակերպումների արդի աշխարհում արագորեն փոխվում ու նոր այլակերպումներ է ստանում նաև սոցիալական կյանքի կազմակերպման ու համակեցության դրվածքը, ինչի արդյունքում փոխվում են նաև մարդկանց համոզմունքներն ու պատկերացումները, համակեցության նորմատիվ ու արժեքային համակարգերը, ինչը պահանջում է ընթացող փոփոխությունների և դրանց հարուցած մարտահրավերների համատեքստում նորովի մեկնաբանել սերունդների համակեցության գոյաբանական կարգի քաղաքակրթական և սոցիոմշակութային առանձնահատկությունները: Այս համատեքստում նախորդ սերունդների՝ երբեմնի համակարգաստեղծ և համակարգապահպան գործառույթ իրականացնող կենսափիլիսոփայության, կյանքի կազմակերպման մշակույթի և/կամ դրանց առանձին տարրերի նորովի իմաստավորումն ու արդիականացումը դառնում են սերունդների կենսաշխարհը կառուցարկող և համակեցության շարունակականությունն ապահովող առանցքային նախապայմաններ: Պատահական չէ, որ հետարդիականության մեր ժամանակներում սերունդների համակեցության կազմակերպման և կանոնակարգման մշակույթի համալիր ուսումնասիրությունը, ինչպես նաև այդ առնչությամբ շրջանառվող գաղափարների և տեսակետների քննական վերլուծությունները նոր հնչեղություն են ձեռք բերել:

Բանն այն է, որ ժամանակակից աշխարհում նախնիների կյանքի կազմակերպման մշակույթն ու սոցիալական կյանքը կառուցադրող ինստիտուցիոնալ համակարգերը մի կողմից հայտնվել են արդիականացման անհրաժեշտության առաջ, մյուս կողմից՝ պարտավոր են պահպանել և հաջորդ սերունդներին փոխանցել սոցիալական ինքնության և նույնականության համընդհանուր հիմունքները: Այլ կերպ ասած՝ ստեղծվել է մի իրավիճակ, երբ սերունդների միջև երկխոսության, ինքնության շարունակականության համար մի կողմից անհրաժեշտ է պահպանել ու պաշտպանել սոցիալականի հիմնական բովանդակությունը կազմող կենսական արժեքները, մյուս կողմից՝ դրանք արդիականացնել: Այս իմաստով կյանքի կազմակերպման մշակույթի դերն ու նշանակությունն ավելի են ընդգծվում, քանի որ վերոնշյալ իրավիճակում անհրաժեշտություն է առաջանում շրջանառել այնպիսի կյանքի մշակույթ, որը կգործառի անցյալն ու ներկան միավորելու և ապագայի գոյաբանական ծրագիր ուրվագծելու հավասարակշռությամբ: Մի բան ակնհայտ է, որ սերունդների համակեցության կազմակերպման մշակույթի տեղի, դերի և կարևորության որոշարկումը հնարավորություն է ընձեռում վերագնահատելու հնի և նորի, կամ, ավելի ճիշտ, անցյալի, ներկայի և ապագայի փոխհարաբերությունները. խնդիր, որը բոլոր ժամանակներում եղել ու մնում է արդիական:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է նաև ժամանակակից աշխարհում տեղի ունեցող մարդաբանական, քաղաքակրթական ու սոցիոմշակութային փոխակերպումների արդյունքներն ու հետևանքներն ապագայի տեսանկյունից իմաստավորելու անհրաժեշտությամբ: Խնդիրն այն է, որ այս ամենի հետևանքով հարկ է դառնում սոցիոմշակութային նոր պայմանների տրամաբանության շրջանակներում ուրվագծել ապագայի գոյաբանական մի նախագիծ, որում սոցիալական կայունության, սերունդների միջև արդարության և պատասխանատվության, մի խոսքով՝ սերունդների համակեցության գոյաբանական կարգի մասին պատկերացումները կնպաստեն ոչ թե ժամանակավոր կամ պայմանական ինչ-որ իրականության, այլ երկարաժամկետ գոյաբանական կարգի արմատավորմանը: Ավելին, վերջին տարիներին արձանագրված տեխնոլոգիական աննախադեպ աճը, մարդկային ապակառուցողական գործունեության մասշտաբների ընդլայնումը, տեղական, տարածաշրջանային և միջազգային մակարդակներում սոցիալ-քաղաքական, կրթական, մշակութային պատշաճ քաղաքականություն որդեգրելու համար տարվող մրցապայքարը ևս անվերապահորեն փաստում են այն մասին, որ մերօրյա քաղաքակրթությունը կանգնած է սերունդների միջև պատասխանատվության, կայունության և արդարության պայմաններ ստեղծելու խնդրի առաջ:

Ժամանակակից հայ հասարակությունում կյանքի կազմակերպման ու կանոնակարգման մշակույթի՝ որպես սերունդների համակեցության գոյաբանական կարգի սոցիոմշակութային առանձնահատկությունների ուսումնասիրությունն ու որոշարկումը հավելյալ հրատապություն են ստանում մեզանում ընթացող սոցիոմշակութային գործընթացների համատեքստում: Արմատական փոխակերպումների ներկա փուլում սոցիոմշակութային խնդիրների բնույթը, սոցիալական ինստիտուտների ապագայամետ ռազմավարության բացթողումները, կրթական համակարգում տեղի ունեցող բարենորոգումների երկարաժամկետ ազդեցությունների արդյունավետության կարևորումը փաստում են դեպի կայուն ապագան միտված գոյաբանական ծրագիր մշակելու և սերունդների միջև համագոյակցման կենսապայմաններ ապահովելու հրատապության մասին:

Եվ վերջապես, հետազոտության արդիականությունը հիմնավորող փաստարկ է նաև այն, որ դեռևս հսկայածավալ անելիքներ կան հայ ժողովրդի ինքնության և համակեցության կազմակերպման մշակույթի առանձնահատկությունների ուսումնասիրման ու բովանդակային վերլուծության մասով: Այս առումով հայ ժողովրդի կյանքի կազմակերպման մշակույթին, ինչպես նաև ինքնության որոշ տարրերին անդրադարձը ոչ միայն կարող է նպաստել հայ ժողովրդի ազգային-ինքնութենական առանձնահատկությունների լուսաբանմանը, այլև կխթանի սերունդների ինքնությանն ու կյանքի մշակույթին վերաբերող մերօրյա հիմնախնդիրների ու գործընթացների նորովի մեկնաբանմանը:

Հիմնախնդրի գիտատեսական մշակվածության աստիճանը: Հարկ է նկատել, որ մասնագիտական գրականության մեջ քիչ ուշադրություն է դարձվում կյանքի կազմակերպման մշակույթի՝ որպես սերունդների համակեցության գոյաբանական կարգի սոցիալ-փիլիսոփայական վերլուծությանը: Եղած ուսումնասիրությունները հիմնականում առնչվում են համակեցության գոյաբանական կարգի առօրեականության համատեքստին, ինչը, սակայն, հիմնովին չի բացահայտում սերունդների համակեցության սոցիոմշակութային այն առանձնահատկությունները, որոնց շնորհիվ կյանքի կազմակերպման մշակույթը կարելի է դիտարկել որպես սերունդների համակեցության գոյաբանական կարգ:

Սերունդների համակեցության գոյաբանական կարգի վերաբերյալ ուսումնասիրությունները հիմնված են սոցիալ-հումանիտար գիտելիքի տարբեր ճյուղերում կատարվող տեսական և գործնական զարգացումների վրա, ինչը ոչ միայն բարդացնում է թեմայի վերաբերյալ միասնական մոտեցման ձևավորման հնարավորությունը, այլև ակնհայտ է դարձնում դրա միջգիտակարգային բնույթը: Յուրաքանչյուր գիտակարգ, առաջադրելով իրեն ներհատուկ մոտեցումներ և ըմբռնումներ և շեշտադրելով խնդրախմբի այս կամ այն կողմերը, հնարավորություն է տալիս համադրել առկա մոտեցումները և ձևավորել խնդրո առարկայի վերաբերյալ շատ թե քիչ համակողմանի պատկեր: Ուսումնասիրության վերոնշյալ տեսանկյունները պայմանականորեն կարելի է բաժանել մի քանի խմբի.

- Հետազոտողների մի խումբ կյանքի կազմակերպման մշակույթը և սերունդների համակեցության հիմնախնդիրը դիտարկում է առօրեականության կառուցարկման համատեքստում (Բերգեր Պ., Դյուրկհայմ Է., Լուկման Տ., Հուսեռլ Է., Շյուց Ա. և այլք):
- Ուսումնասիրողների մեկ այլ խումբ սերունդների համակեցությունն ու միջսերնդային փոխհարաբերությունները քննարկում է ազգային ինքնության տեսանկյունից՝ սերունդների ինքնության շարունակականության հարցում կարևորելով պատմական անցյալի հետ կառուցողական երկխոսության և միջսերնդային համերաշխության դերը (Լուրիե Ս., Միդ Մ., Ռեպինա Լ. և այլք):
- Հիմնախնդիրն իր ուրույն տեղն ունի նաև պատմական հիշողությունն ուսումնասիրող հեղինակների մոտ, ովքեր կարևորում են պատմական հիշողության դերն ու նշանակությունը սերունդների կենսաշխարհը կառուցարկելու գործում (Ասսման Յ., Ալբվաքս Մ., Հիրշ Մ., Միդ Ջ. Հ., Ռիկյոր Պ. և այլք):
- Հետազոտողների մեկ այլ խումբ սերունդների համակեցության հիմնախնդիրը քննարկում է պատասխանատվության և միջսերնդային արդարության հիմնահարցերի համատեքստում (Ագիուս Է., Բերրի Բ., Գոսսերիես Ա., Դե-Շալիտ Ա., Թրեմմել Ջ., Յոնաս Հ., Ռոլս Ջ., Փարթրիջ Է. և այլք):

Կարևոր է նշել, որ վերջին տարիներին սերունդների համակեցության հիմնախնդիրն ու առհասարակ միջսերնդային փոխհարաբերություններին առնչակից

հիմնահարցերը (սերունդների ինքնության, միջսերնդային արդարության և պատասխանատվության և այլն) աստիճանաբար ավելի մեծ ուշադրության են արժանանում հայալեզու մասնագիտական գրականության մեջ (Դեմիրճյան Մ., Զաքարյան Ս., Հարությունյան Է., Միրզոյան Վ., Մկրտչյան Ն., Սարգսյան Ա., Սողոմոնյան Գ. և այլք):

Հետազոտության նպատակն ու խնդիրները: Հետազոտության նպատակն է բացահայտել կյանքի կազմակերպման մշակույթը որպես սերունդների փոխհարաբերությունները սահմանող և կանոնակարգող գոյաբանական կարգ, ինչը հնարավորություն է տվել հիմնախնդրի ուսումնասիրության շրջանակում առանձնացնել և վերլուծել տեսական ու գործնական նշանակություն ունեցող երկու կարևոր ենթահարցեր.

- Սերունդների կենսափորձը որպես սոցիոմշակութային նախագիծ,
- Միջսերնդային փոխհարաբերությունները սոցիալական կյանքի կառուցարկման համատեքստում:

Վերոնշյալ ենթահարցերի ուսումնասիրության և դրանց առանձնահատկությունների բացահայտման նպատակով առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- կյանքի կազմակերպման մշակույթը դիտարկել որպես սերունդների փոխհարաբերությունները կարգավորող ինստիտուցիոնալ նախագիծ,
- վերլուծել սերունդների համակեցության և ինքնության առանձնահատկությունները սոցիոմշակութային տարբեր համակարգերում,
- ուսումնասիրել և բացահայտել արդի քաղաքակրթական և սոցիոմշակութային այն գործընթացները, որոնք պահանջում են ազգային ինքնության համատեքստում նորովի մեկնաբանել և վերարժևորել սերունդների փոխհարաբերության հիմնախնդիրները,
- վերհանել պատմական հիշողության դերն ու նշանակությունը սերունդների ինքնության շարունակականության գործընթացում,
- պատասխանատու կախվածությունը ներկայացնել որպես սերունդների փոխհարաբերությունների կանոնակարգման անկյունաքար,
- ուսումնասիրել արդարության հիմնախնդիրը միջսերնդային փոխհարաբերությունների համատեքստում,
- քննարկել սոցիալական կայունության դերն ու նշանակությունը ապագա սերունդներին բարելավ կենսապայմաններ ավանդելու և սոցիալական ինստիտուտների բարենորոգման հարցում:

Հետազոտության մեթոդաբանական հիմքերը: Ատենախոսության համար մեթոդաբանական հիմքեր են համեմատության, պատմականության, համանմանության, վերլուծության և համադրության մեթոդները: Համեմատության մեթոդի միջոցով բացահայտվել են սոցիոմշակութային տարբեր համակարգերում

սերունդների կյանքի կազմակերպման մշակույթի առանձնահատկությունների ընդհանրություններն ու տարբերությունները: Քանի որ աշխատանքի շրջանակում կատարվել է բնագրերի վերլուծություն, համեմատության մեթոդի շնորհիվ հնարավոր է դարձել նաև զուգահեռներ անցկացնել որոշ ուսմունքների և հայեցակետերի միջև: Պատմականության մեթոդի օգնությամբ նկարագրվել են սերունդների համակեցությանն առնչակից մի շարք հիմնահարցերի ծագման և զարգացման ընթացքն ու օրինաչափությունները: Հարաբերականորեն նոր և բարդ հասկացությունների, հայեցակարգային որոշ եզրերի պարզեցման և դյուրըմբռնելի դարձնելու նպատակով կիրառվել է համանմանության մեթոդը: Միջգիտակարգային մոտեցման շնորհիվ հնարավորություն է ստեղծվել գիտելիքի տարբեր ճյուղերի համադրմամբ մեկ ընդհանուր իմացաբանական դաշտ ստեղծել՝ խնդրո առարկան համակողմանի ուսումնասիրելու նպատակով:

Հետազոտության գիտական նորույթը: Մանրամասնորեն վերլուծելով կյանքի կազմակերպման մշակույթի՝ որպես սերունդների համակեցության գոյաբանական կարգի առանձնահատկությունները՝ արվել են գիտական նորույթ պարունակող, տեսական և գործնական նշանակություն ունեցող մի շարք եզրակացություններ և ընդհանրացումներ.

- Կյանքի կազմակերպման մշակույթը դիտարկելով որպես սերունդների փոխհարաբերությունները կանոնակարգող ինստիտուցիոնալ նախագիծ՝ հիմնավորվել է այն դրույթը, որ այդ նախագիծը իրենից ներկայացնում է սոցիալական կյանքը կառուցադրող կանոնների և նորմերի ինստիտուցիոնալ համակարգ կամ այլ կերպ ասած՝ «խաղի կանոններ», որոնք ամեն մի նոր սերնդի համար ծառայում են որպես կենսագործունեության կազմակերպման ուղեցույց:
- Առաջադրվել և հիմնավորվել է այն թեզը, որ սերունդների համակեցությունը կանոնակարգող ինստիտուցիոնալ նախագծի շնորհիվ պահպանվում, ձևայնացվում ու վերարտադրվում են նախորդ սերունդների կողմից ձևավորված կենսակերպի առանձնահատկությունները և հաջորդ սերունդներին փոխանցվում իբրև «փորձի և սխալի» մեթոդով ճշգրտված կյանքի յուրահատուկ ծրագիր, իբրև նախորդ սերունդների կենսափիլիսոփայություն:
- Հաշվի առնելով ժամանակակից աշխարհում ընթացող սոցիոմշակութային փոխակերպումների առանձնահատկությունները՝ առաջադրվել և հիմնավորվել է այն դրույթը, որ սերունդների համակեցության կազմակերպման մշակույթը ոչ միայն պետք է ղեկավարվի նախնիների կյանքի կազմակերպման և կանոնակարգման հիմնարար սկզբունքներով, այլև դրանք պետք է արդիականացնի՝ ըստ նոր հանգամանքների և մարտահրավերների:
- Վերլուծելով համակեցության կազմակերպման նախորդ մշակույթի հանդեպ նոր սերնդի վերաբերմունքի հարցը՝ հիմնավորվում է այն թեզը, որ ամեն մի նոր սերունդ

նախնիների կյանքի կազմակերպման մշակույթը թեև արդիականացնում և հարմարեցնում է նոր ձևավորված սոցիոմշակութային հանգամանքներին, բայց այն հիմնովին չի մերժում, որովհետև ա) այն քիչ թե շատ փորձված և այս տեսանկյունից ավելի հուսալի է թվում, բ) նախնիների կենսաշխարհի շրջանակներում ձևավորված ավանդական վարքաձևերը, ի տարբերություն նոր ձևավորվելիք կյանքի մշակույթի վարքաձևերի, ավելի հասկանալի և նախընտրելի են, գ) դրան հետևելով ու ենթարկվելով՝ նոր սերունդը ձեռք է բերում «յուրայինի» կարգավիճակ:

- Քննարկելով կյանքի կազմակերպման մշակույթի հիմնախնդիրը սոցիոմշակութային ու քաղաքակրթական արմատական փոխակերպումների համատեքստում՝ առաջադրվել և հիմնավորվել է այն դրույթը, որ սոցիոմշակութային վերափոխված պայմաններում նախնիների կյանքի կազմակերպման մշակույթն աստիճանաբար կորցնում է երբեմնի համակարգաստեղծ ու համակարգապահպան գործառույթներն ու կարողությունները: Եվ այն մի կողմից հայտնվում է արդիականացման անհրաժեշտության առաջ, մյուս կողմից, սակայն, պարտավոր է պահպանել և հաջորդ սերունդներին փոխանցել սոցիալական ինքնության և նույնականության համընդհանուր հիմունքները:
- Հաշվի առնելով արդի սոցիոմշակութային փոխակերպումների համատեքստում անցյալ ու ներկա իրողությունների ժառանգական կապի դինամիկան՝ հիմնավորվում է այն դրույթը, որ եթե նախկինում պատմական հիշողությունը սերունդների համար պարզապես ծառայում էր որպես անցյալի կենսափիլիսոփայության և նախորդ սերունդների կյանքի մշակույթի պասիվ վերարտադրման միջոց, ապա հետարդիականության մեր ժամանակներում սերունդների միջև հետզհետե խորացող անջրպետը հաղթահարելու և ինքնության շարունակականությունն ապահովելու համար անհրաժեշտ է պատմական հիշողության որոշակի տարրերի վերաիմաստավորում:
- Սոցիալական կյանքում սերունդների միջև փոխհարաբերությունների առանձնահատկություններն ուսումնասիրելիս ցույց է տրվել, որ սոցիոմշակութային վերափոխված պայմանների տրամաբանության շրջանակներում անհրաժեշտ է դառնում ապագայի այնպիսի գոյաբանական նախագծի ուրվագծումը, որը կնպաստի սերունդների միջև պատասխանատու կախվածության գիտակցության ձևավորմանը: Այս համատեքստում հիմնավորվել է այն թեզը, որ պատասխանատու կախվածությունը գործում է անկախ սերունդների տարաժամանակային տեղակայումից և ապահովում է տվյալ սոցիոմշակութային կարգի գործառության արդյունավետությունը:
- Հանգամանորեն վերլուծելով սոցիալական արդարության դերը սերունդների համակեցության կարգավորման հարցում՝ առաջադրվել և հիմնավորվել է այն թեզը, որ սերունդների համար արդար խնայողություններ կատարելու սկզբունքը, չնայած որոշ ներքին հակասությունների և գործնականում իրականացման դժվարությունների, համակողմանի պատկերացում է տալիս խնդրո առարկայի մասին և կարող է հիմք

ծառայել ժամանակակից հասարակություններում սոցիալական ինստիտուտների բարենորոգման համար:

- Սերունդներին կայուն կենսապայմաններ և հնարավորություններ ավանդելու տեսանկյունից առաջ է քաշվել և հիմնավորվել է այն թեզը, որ սոցիալական ինստիտուտների բարենորոգման ճանապարհին հանդիպող հիմնական խոչընդոտներից մեկը սոցիալական համակարգերում ապագա սերունդների երկարաժամկետ խնդիրների հաշվին ներկայի կարճաժամկետ շահերին ու խնդիրներին առաջնահերթություն տալն է:

Պաշտպանության ներկայացված դրույթները: Վերլուծելով կյանքի կազմակերպման մշակույթի՝ որպես սերունդների համակեցության գոյաբանական կարգի ձևավորման պատճառներն ու շարժառիթները, ինչպես նաև միջսերնդային փոխհարաբերություններին առնչակից մի շարք կարևոր հիմնահարցերը և սոցիոմշակութային կյանքում դրանց հնարավոր դրսևորումները, համադրելով հիմնախնդրի վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ առկա և ուշադրության արժանի տեսակետներն ու հայեցակարգերը՝ պաշտպանության են ներկայացվել հետևյալ դրույթները.

- Առաջադրվել ու հիմնավորվել է այն դրույթը, որ առօրեականության մակարդակում անընդհատ կրկնվող ցանկացած գործողություն ենթարկվում է ինստիտուցիոնալացման, ինչն իր հերթին անցնում է միմյանց սերտորեն փոխկապված երեք փուլերի միջով՝ վերջնարդյունքում ձևավորվելով որպես կենսափիլիսոփայություն. 1) կրկնվող երևույթի նկատմամբ որոշակի նախատրամադրվածության ձևավորման փուլ, 2) կյանքի կազմակերպման մշակույթի տիպականացման և կենսափիլիսոփայության ձևավորման ավարտական փուլ, 3) կենսափիլիսոփայության օրինականացման փուլ:

- Կյանքի կազմակերպման մշակույթի առանձնահատկությունների բովանդակային վերլուծության հիման վրա առաջադրվել է այն դրույթը, որ ավանդապաշտական համակարգերում նախորդ սերունդների՝ «ավանդույթի ուժով» գործող գոյաբանական կարգը հիմնականում անհանդուրժող է նորարարության և փոփոխության նկատմամբ, հետևաբար նման համակարգերում նախնիների անցյալն ամեն նոր սերնդի ապագան է:

- Առաջադրվել և հիմնավորվել է այն դրույթը, որ համակեցության կազմակերպման մշակույթի կենսունակությունն ու կայունությունը պայմանավորված են ոչ միայն անցյալի արմատներից անվերապահորեն կառչելով, այլև սոցիոմշակութային հարափոփոխ պայմաններին հարմարվելու կարողունակությամբ: Հետևաբար, իրապես կայուն ու կենսունակ է կյանքի կազմակերպման այն մշակույթը, որն ի զորու է վերափոխվելու ու հարմարվելու ժամանակի սոցիոմշակութային դաշտի փոփոխություններին՝ միաժամանակ սերունդներին փոխանցելով այն հիմնարար

հատկանիշներն ու առանձնահատկությունները, որոնք առանցքային են ինքնության շարունակականության համար:

- Քննարկելով պատմական հիշողության դերն անցյալի սոցիոմշակութային ժառանգության պահպանման և սերունդներին փոխանցելու հարցում՝ առաջադրվել է այն դրույթը, որ պատմական հիշողությունն ինքնին ոչ թե տեղեկատվության պասիվ համակարգ է, այլ ընտրողական և մեկնողական անվերջ գործընթաց, որի շրջանակներում անցյալը վերաիմաստավորվում և վերակառուցվում է՝ հարմարեցվելով ներկայի սոցիոմշակութային պահանջներին:
- Միջսերնդային փոխհարաբերությունները ուսումնասիրելով սոցիալական կյանքի կառուցարկման համատեքստում՝ առաջադրվել և հիմնավորվել է այն դրույթը, որ սերունդների միջև պատասխանատու կախվածության գիտակցումն ու միջսերնդային արդարության հղացքը սերտորեն փոխկապակցված են. փոխադարձության և պատասխանատու կախվածության վերաբերյալ մտայնություններն ի վերջո հանգում են միջսերնդային արդարության հղացքին, իսկ վերջինիս հիմքում սերունդների միջև պատասխանատու կախվածության գիտակցության կարևորումն է:
- Առաջադրվել է այն դրույթը, որ սոցիալական կայունությունն էականորեն ազդում է սոցիալական համակարգի զարգացման, հետևաբար դրա երկարաժամկետ հուսալիության, անվտանգության ու ամբողջականության վրա, ուստի կայունության գաղափարի քննարկումն առանձնակի ուշադրության է արժանանում ոչ միայն ներսերնդային, այլև միջսերնդային փոխհարաբերությունների տեսանկյունից:

Ատենախոսության տեսական և գործնական նշանակությունը: Ատենախոսության շրջանակներում առաջադրված խնդիրները, կատարված ընհանրացումներն ու եզրահանգումներն ունեն թե՛ տեսական, թե՛ գործնական կարևոր նշանակություն և կարող են՝

- լրացնել և հարստացնել փիլիսոփայության տեսական հայալեզու շտեմարանը առաջադրված հիմնահարցերի մասով,
- օգտագործվել արդի մշակութային, սոցիալ-քաղաքական գործընթացների առանձնահատկությունների ուսումնասիրություններում,
- օգտագործվել ԲՈՒՀ-երում դասավանդվող «Փիլիսոփայություն», «Սոցիալական փիլիսոփայություն», «Ազգային ինքնություն», «Բարոյագիտություն» դասընթացներում որպես ուսումնաօժանդակ նյութ,
- նպաստել հասարակական և պետական կառավարման տարբեր մակարդակներում սոցիալական և քաղաքական ծրագրերի մշակմանը:

Ատենախոսության փորձաքննությունը: Ատենախոսության հիմնական գաղափարներն ու դրույթները ներկայացվել ու քննարկվել են ԵՊՀ Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի Սոցիալական փիլիսոփայության, բարոյագիտության և գեղագիտության ամբիոնի տեսական սեմինարների ընթացքում (2022-2024 թթ.),

Յագելոնյան համալսարանի (Լեհաստան) փիլիսոփայության ֆակուլտետի «Բարոյագիտության միջգիտակարգային կենտրոնում» (Interdisciplinary Center for Ethics, INCET) որպես միջազգային կրթաթոշակի շահառու-ասպիրանտ կատարված այցի շրջանակներում (նոյեմբեր, 2022), Վրոցլավում (Լեհաստան) տեղի ունեցած «Ժողովրդավարության և բազմազանության ամառային ինստիտուտի» ընթացքում (հուլիս, 2023), ԵՊՀ ՈՒԳԸ 7-րդ (2021) և 9-րդ (2023) միջազգային գիտաժողովների ընթացքում, ՀՀ ԿԳՄՍ նախարարության Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի աջակցությամբ ԵՊՀ-ում գործող Պատմության փիլիսոփայության և տեսության լաբորատորիայի տեսական սեմինարներում (2023-2025 թթ.):

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի գիտական հոդվածներում:

Ատենախոսության պլանը քննարկվել է ԵՊՀ Սոցիալական փիլիսոփայության, բարոյագիտության և գեղագիտության ամբիոնում 2022 թվականի սեպտեմբերին, ամբողջական շարադրանքը՝ 2024-ի սեպտեմբերին, իսկ արդեն 17.12.2024-ին՝ վերջնական քննարկումից հետո, երաշխավորվել է հրապարակային պաշտպանության:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից՝ 3-ական ենթագլուխներով, եզրակացությունից և գրականության ցանկից: Ատենախոսության ընդհանուր ծավալը 141 էջ է:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության **ներածությունում** հիմնավորվել է ուսումնասիրվող թեմայի արդիականությունը, ներկայացվել է գիտական մշակվածության աստիճանը, առաջ են քաշվել հետազոտության նպատակներն ու խնդիրները, մեթոդաբանական սկզբունքները, առաջադրվել են գիտական նորույթ պարունակող դրույթները, հիմնավորվել է ատենախոսության տեսական և գործնական նշանակությունը:

Առաջին գլուխը՝ **«Սերունդների կենսափորձը որպես սոցիոմշակութային նախագիծ»** վերտառությամբ, նվիրված է կյանքի կազմակերպման մշակույթի՝ որպես սերունդների համակեցությունն ապահովող ինստիտուցիոնալ նախագծի առանձնահատկությունների վերհանմանը, միջսերնդային փոխհարաբերություններում ազգային ինքնության շարունակականության հիմնախնդրի ու սոցիոմշակութային տարբեր համակարգերում սերունդների համակեցության գոյաբանական կարգի առանձնահատկությունների վերլուծությանը: Սույն գլխում քննարկվում է նաև պատմական հիշողության նշանակությունը սերունդների ինքնության շարունակականության գործընթացում:

«Կյանքի կազմակերպման մշակույթը որպես սերունդների փոխհարաբերությունների ինստիտուցիոնալ նախագիծ» ենթագլխում ներկայացվում են կյանքի կազմակերպման մշակույթի ընդհանուր սոցիոմշակութային բնութագիրն ու սերունդների համակեցության համար ունեցած նշանակությունը: Կյանքի կազմակերպման ու կանոնակարգման մշակույթը դիտարկելով որպես միջսերնդային փոխհարաբերությունների ինստիտուցիոնալ նախագիծ՝ եզրակացվում է, որ արդի սոցիոմշակութային փոխակերպումների համատեքստում սերունդների համակեցության կազմակերպման մշակույթը ոչ միայն պետք է առաջնորդվի անցյալի կյանքի կազմակերպման հիմնարար սկզբունքներով, այլև դրանք պետք է արդիականացնի:

Այս համատեքստում ուշագրավ է այն հանգամանքը, որ առօրեականության շրջանակներում անընդհատ կրկնվող ցանկացած գործողություն ենթարկվում է ինստիտուցիոնալացման, ինչն իր հերթին անցնում է միմյանց սերտորեն փոխկապված երեք փուլերի միջով՝ վերջնարդյունքում ձևավորվելով որպես կենսափիլիսոփայություն. ա) կրկնվող երևույթի նկատմամբ որոշակի նախատրամադրվածության ձևավորման փուլ, բ) կյանքի կազմակերպման մշակույթի տիպականացման և կենսափիլիսոփայության ձևավորման ավարտական փուլ, գ) կենսափիլիսոփայության օրինականացման փուլ: Կարող ենք պնդել, որ կյանքի կազմակերպման մշակույթը պահպանում, ձևայնացնում ու վերարտադրում է նախորդ սերունդների կողմից ձևավորված կենսակերպի առանձնահատկությունները և հաջորդ սերունդներին փոխանցում իբրև «փորձի և սխալի» մեթոդով ճշգրտված կյանքի յուրահատուկ ծրագիր, իբրև նախնիների կենսափիլիսոփայություն: Այս իմաստով նախնիների կյանքի կազմակերպման մշակույթը սահմանում և կարգավորում է սերունդների

փոխհարաբերությունները՝ տրամադրելով համակեցության շրջանակերում գործառելու համար նախատեսված «խաղի կանոններ»:

Կարևոր է նկատել, սակայն, որ ժամանակակից աշխարհում մարդկությունն առերեսվում է սոցիոմշակութային ու քաղաքակրթական տարատեսակ փոխակերպումների, որոնք հիմնովին այլափոխում են աշխարհի ավանդական պատկերը՝ առաջադրելով համակեցության կազմակերպման ու կանոնակարգման նոր սկզբունքներ և մեխանիզմներ, արժեքային ու աշխարհայացքային այլ առաջնահերթություններ և նախընտրություններ: Արդյունքում ձևավորվում է սոցիոմշակութային մի նոր համատեքստ, որի շրջանակներում այլևս հնարավոր չէ ղեկավարվել գոյաբանական նախորդ կարգում հաստատված կյանքի կազմակերպման սկզբունքներով ու կանոններով: Խնդիրն այն է, որ երբեմնի ավանդապաշտական հասարակություններում համակեցության մշակույթն արմատական փոխակերպումներ չէր ապրում, և ամեն մի հաջորդ սերունդ ինքնակամ ենթարկվում էր առօրյա կյանքի կանոնակարգման սոցիոմշակութային այդ ինստիտուտի պահանջներին ու պարտադրանքներին:

Բայց «արագ ժամանակների» մեր աշխարհում իրավիճակն էապես փոխվել է: Հետարդիականության սոցիոմշակութային համատեքստն անընդհատ «խմբագրվում է», և անգամ մեկ սերնդի կյանքում այնպիսի արմատական փոփոխություններ են տեղի ունենում, կյանքի հանգամանքներն այնպիսի մարտահրավերներ են ծնում, որոնց հաղթահարման ձևն ու եղանակը նախորդ սերունդների համակեցության կարգում պարզապես տրված չէին: Հանգամանք, որից ուղղակիորեն բխում է, որ կյանքի կազմակերպման մշակույթը պիտի ինչ-որ չափով արդիականացվի: Ընդ որում՝ պարզ է դառնում, որ կյանքի կազմակերպման մշակույթի կենսունակությունն ու կայունությունը պայմանավորված են ոչ միայն անցյալի արմատներից անվերապահորեն կառչելով, այլև հարափոփոխ սոցիոմշակութային պայմաններին հարմարվելու կարողունակությամբ: Հետևաբար, կայուն ու կենսունակ է կյանքի կազմակերպման այն մշակույթը, որն ի զորու է վերափոխվելու և հարմարվելու ժամանակի սոցիոմշակութային դաշտի փոփոխություններին՝ միաժամանակ սերունդներին փոխանցելով այն հիմնարար հատկանիշներն ու սոցիոմշակութային առանձնահատկությունները, որոնք առանցքային են սերունդների նույնականության ու ինքնության շարունակականության ապահովման համար:

Երկրորդ՝ **«Ինքնության հիմնախնդիրը միջսերնդային փոխհարաբերություններում»** ենթագլխում ազգային ինքնության շարունակականության հիմնախնդիրը քննարկվում է սերունդների փոխհարաբերությունների տեսանկյունից, մանրամասնորեն վերլուծվում են սոցիոմշակոթային տարբեր համակարգերում ինքնության կառուցարկման և սերունդների համակեցության կազմակերպման առանձնահատկությունները:

Ընդհանրական առումով կարելի է ասել, որ ազգային ինքնությունը տալիս է մեզ այն բանի իմացությունը, թե ով ենք մենք, և ինչպես ենք կապված այն աշխարհին և մարդկանց, ում հետ համագոյակցում ենք: Այլ կերպ ասած՝ այն հնարավորություն է տալիս որոշարկելու, թե ինչով ենք նման նրանց, ում հետ կիսում ենք որոշակի կյանքի մշակույթ, և ինչով՝ տարբեր մյուսներից, ում հետ չենք կիսում: Այսինքն՝ ազգային ինքնությունը մի կողմից բավարարում է անհատի/սերնդի յուրահատուկ լինելու և մյուսներից տարբերվելու, սակայն մյուս կողմից՝ որևէ խմբին նույնականանալու, հուսալիության և պաշտպանվածության համար «սոցիոմշակութային ապաստարան» ունենալու ներքին պահանջմունքը: Ազգային ինքնությունն արտացոլում է ազգի սոցիոմշակութային առանձնահատկությունները, հավաքական պատկերացումներն ու հոգեկերտվածքը: Այլ բառերով, այն իր մեջ ամփոփում է ազգի սոցիոմշակութային հիշողությունն ու սոցիոմշակութային այն հենքը, որի վրա կառուցվում է սերունդների համակեցության գոյաբանական կարգը: Այս իմաստով ազգային ինքնության շարունակականության ապահովումը հենց ազգային կենսափորձի, ազգային կենսափիլիսոփայության ավանդումն է սերնդեսերունդ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ համաշխարհայնացման և սոցիոմշակութային արմատական փոխակերպումների մերօրյա աշխարհում ազգային ինքնության շարունակականության հիմնախնդիրը լուրջ մարտահրավերների է բախվում, եզրակացվում է, որ նման իրողություններում մեզանում առանցքային նշանակություն է ստանում անցյալի հետ կառուցողական երկխոսության կազմակերպումը:

Մարդկության պատմության փորձը ցույց է տալիս, որ չի կարող ստեղծվել ապահով ներկա ու կայուն ապագա առանց անցյալի յուրացման և ինքնաճանաչման: Ինքնաճանաչողությունը, ինքնության պահպանումն ու շարունակականության ապահովումը, որպես կանոն, հիմնվում են անցյալի հետ կառուցողական երկխոսության վրա: Ազգային ինքնության շարունակականության գործում անցյալի առկայությունը և դրա հետ պատշաճ երկխոսությունը հիմնային գործառույթ են կատարում՝ ամրապնդելով սերունդների անվտանգությունն ու պաշտպանվածությունը, մանավանդ մեր օրերում, երբ սոցիալ-տնտեսական, մշակութային, պատմական և քաղաքական մի շարք բեկումնային իրադարձություններ հանգեցրել են ինքնության (վերա)կառուցարկման, ինչպես նաև արդիականացման խնդիրների:

Այս իմաստով կարելի է պնդել, որ անցյալից ներկա սերունդներին ավանդվող սոցիոմշակութային գանձարանն ապահովում է վերջիններիս գոյաբանական տեղադրությունն ու անհրաժեշտ նախապայման է սոցիոմշակութային կյանքի շարունակականության համար: Եվ իսկապես, մենք չենք կարող լիովին հասկանալ ներկան և ուրվագծել ապագայի գոյաբանական նախագիծ առանց իրազեկության այն

ուղիների, որոնցով անցյալը շարունակում է ձևավորել մեր փորձառությունները և ինքնությունը:

Հարց է առաջանում՝ մի՞թե անցյալի կյանքի մշակույթի և նախնիների կենսափիլիսոփայության նույնկերպ կիրառության հանձնառությունն ամեն եկող սերնդի ինքնության կառուցարկման համար անհրաժեշտ նախապայման է. չէ՞ որ յուրաքանչյուր սերունդ, այնուամենայնիվ, ապրում ու արարում է նախորդներից տարբերվող մեկ այլ սոցիոմշակութային տարածության մեջ, որտեղ գործում են տվյալ սոցիալ-պատմական համատեքստին բնորոշ արժեքներ ու համոզմունքներ: Այս առնչությամբ վերլուծելով սերունդների ինքնության և համակեցության գոյաբանական կարգի առանձնահատկությունները պատմամշակութային փոխակերպումների համատեքստում՝ առանձնացվել են սերունդների համակեցության մշակույթի երեք հիմնական տիպեր. ա) ավանդապաշտական մշակույթ, որը, ըստ էության, անհանդուրժող է փոփոխությունների և նորարարությունների նկատմամբ, և նման համակարգերում սերունդների համակեցությունը կարգավորվում է նախնիների գոյաբանական կարգում հաստատված կյանքի կազմակերպման սկզբունքներով ու կանոններով, բ) մոդեռնիստական (արդիական) մշակույթ, որի շրջանակներում սերունդների համակեցությունը կարգավորող գործոններ են դառնում ժամանակակիցների կենսադիրքորոշումները, պատկերացումներն ու վարքաձևերը՝ կարևորելով նորարության և առաջընթացի գաղափարները, գ) հետմոդեռնիստական (հետարդիական) մշակույթ, որին բնորոշ են անկայուն փոփոխություններն ու սերունդների միջև առաջացող խզումները:

Երրորդ՝ **«Պատմական հիշողությունը որպես սերունդների համակեցության սոցիոմշակութային համատեքստ»** ենթագլխում պատմական հիշողությունը քննարկվում է իբրև սերունդների ինքնության շարունակականության համար առանցքային նշանակություն ունեցող նախապայման, իբրև անցյալի ինքնութեենական արժեքներին հավատարիմ մնալու, սակայն միևնույն ժամանակ դրանք վերանայելու և վերարժևորելու յուրօրինակ համատեքստ:

Մարդկային համակեցության կազմակերպման, սերունդների սոցիոմշակութային կյանքի կանոնակարգման, ինչպես նաև ինքնության շարունակականությանն ուղղված գործընթացներում մեծ կարևորություն ունեն անցյալի ժառանգության և նրա վերաիմաստավորման հիմնախնդիրները: Բանն այն է, որ անցյալից փոխանցված արժեքներն ու կենսափորձը, պատմական հիշողության մեջ ամբարված կենսափիլիսոփայությունը սոցիոմշակութային միջավայրի այն բաղադրամասերն են, որոնք անմիջապես մասնակցում են ամեն հաջորդ սերնդի ինքնության և համակեցության կազմակերպման առանձնահատկությունների ձևավորմանը:

Պատմական հիշողության միջոցով անցյալի ժառանգության պահպանումը ոչ միայն սոցիալական համակարգերի կայունության, այլև ապագա սերունդների

ինքնության և արժեքների շարունակականության կարևոր նախապայմաններից մեկն է: Այն մասնավորապես կապ է ստեղծում անցյալի և ներկայի միջև և խթանում շարունակական զարգացման այնպիսի կյանքի մշակույթի կառուցարկումը, որը չնայած գոյություն ունի «այստեղ և հիմա», սակայն «հարգում է» անցյալը և պատրաստ է արձագանքել ապագայի մարտահրավերներին:

Հարկ է նկատել, որ սոցիալական միջավայրն անմիջականորեն ազդում է այն եղանակների վրա, թե ինչպես ենք ներկայում հիշում և գնահատում անցյալը: Հանգամանք, որն արդեն իսկ հուշում է անցյալի փոփոխական լինելու, կամ այլ կերպ ասած՝ ներկայի պայմաններին ու պահանջներին հարմարվելու մասին: Եվ պատահական չէ, որ պատմական հիշողությունը հաճախ մեկնաբանվում է որպես անցյալի վերակառուցում՝ ներկայի լույսի ներքո: Այս առնչությամբ կարևոր է նշել նաև, որ պատմական հիշողությունը, որի միջոցով մեզ հասու է դառնում նախնիների կյանքի կազմակերպման մշակույթը, պարզապես փաստերի պասիվ հավաքագրման գործընթաց չէ: Այն աշխատում է ընտրողաբար, ուստի ներկայի շրջանակներում ուրվագծվող անցյալը փոփոխական է, այն հարմարվում է ներկայի կարիքներին և քմահաճույքներին:

Երկրորդ՝ **«Միջսերնդային փոխհարաբերությունները սոցիալական կյանքի կառուցարկման համատեքստում»** գլուխը նվիրված է սոցիալական կյանքի կազմակերպման և կանոնակարգման համատեքստում սերունդների փոխհարաբերությունների վերլուծությանը: Սույն գլխում սերունդների միջև պատասխանատու կախվածությունը դիտարկվում է որպես միջսերնդային փոխհարաբերությունների կարգավորման հիմունք, որն ապահովում է սոցիոմշակութային կարգի գործառության արդյունավետությունը: Սերունդների համակեցության կանոնակարգման տեսանկյունից քննարկվում են նաև սոցիալական արդարության դերն ու նշանակությունը, և այս համատեքստում մանրամասնորեն վերլուծվում է միջսերնդային արդարությունը՝ որպես սոցիալ-փիլիսոփայական հիմնախնդիր: Եվ վերջապես, աշխատանքի այս գլխում քննարկվում է նաև սոցիալական կայունությունը որպես սերունդների փոխհարաբերությունների կարգավորման և ապագա սերունդների բարեկեցության ապահովման կարևոր գործոն:

Երկրորդ գլխի առաջին՝ **«Պատասխանատու կախվածությունը որպես սերունդների փոխհարաբերությունների կարգավորման սոցիոմշակութային հիմունք»** վերտառությամբ ենթագլխում սերունդների միջև փոխադարձ պատասխանատու կախվածությունը դիտարկվում է որպես սոցիալական կյանքի պահպանման և փոխանցման կարևորագույն պայման: Հաշվի առնելով մարդկության առջև ծառացած մերօրյա մարտահրավերներն ու վերջիններիս երկարաժամկետ հետևանքները, ինչպես նաև բնապահպանական, առողջապահական, սոցիալ-տնտեսական, քաղաքական և այլ բնագավառներում տեղի ունեցող

իրադարձությունները՝ ցույց է տրվում, որ պատասխանատու կախվածությունը, անկախ սերունդների տարածաժամանակային կարգավիճակից, հանդես է գալիս որպես սերունդների համակեցության կարգավորման հիմունք՝ ապահովելով համակեցության միասնական կարգի գործառությունը:

Հայտնի փաստ է, որ նախկինում մարդու ազդեցությունը բնության վրա այնքան մեծ չէր, ինչքան այսօր: Այլ կերպ ասած՝ գոյություն ուներ որոշակի հավասարակշռություն մարդու կողմից կատարվող տեխնոլոգիական միջամտությունների և բնական աշխարհի միջև: Նման պայմաններում բնության օգտագործումը մարդկային նպատակներին և շահերին ծառայեցնելու համար բարոյագիտական լուրջ խնդիրներ չէր առաջացնում, և հետևաբար բնության և ապագա սերունդների հանդեպ մարդկանց ունեցած պատասխանատվության մասին այդքան շատ չէր խոսվում: Այսօր, սակայն, տեխնոլոգիաների դերն անասելի մեծացել է մարդկանց կյանքում: Ո՛չ մերօրյա մարդը, ո՛չ բնությունը, թվում է, այլևս ի վիճակի չեն վերահսկել ստեղծված իրավիճակը: Եվ պատահական չէ, որ նման իրավիճակում սերունդների միջև պատասխանատվության և փոխադարձ կախվածության մասին սոցիալ-փիլիսոփայական մտայնությունները նորովի են իմաստավորվում:

Կարևոր է նշել, որ չնայած ամեն մի սերունդ գործում է իրեն ներհատուկ սոցիոմշակութային տարածության մեջ, ունենում է սոցիալական կյանքում առաջխաղացման՝ մյուս սերունդներից ինչ-որ չափով տարբերվող սկզբունքներ, արժեքներ և առանձնահատկություններ, սակայն յուրաքանչյուր սերնդի գործողությունների հետևանքներն էականորեն կապված են և ազդում են մյուսների վրա: Հանգամանք, ինչից կարելի է ենթադրել, որ սերունդները միմյանց նկատմամբ որոշակի կախվածության մեջ են:

Այս առնչությամբ սերունդների միջև պատասխանատու կախվածության մշակույթը անցյալ, ներկա և ապագա սերունդներին դիտարկում է որպես օրգանական մի ամբողջություն, որտեղ տարածության այս կամ այն կետում գտնվելը, ինչպես նաև ժամանակային գործոնը բարոյական կարևորագույն չափանիշներ չեն, այսինքն՝ անկախ այն բանից, թե տարածության և/կամ ժամանակի որ հատվածում է տվյալ սերունդը գտնվում, բարոյական պատասխանատվություն կրելու նորմերն ու կանոնները նույնն են:

Երկրորդ՝ **«Արդարության հիմնախնդիրը միջսերնդային փոխհարաբերություններում»** ենթագլխում քննարկվում է սոցիալական արդարության նշանակությունը միջսերնդային փոխհարաբերությունների համատեքստում, ցույց է տրվում սերունդների միջև արդարության՝ որպես սոցիալ-փիլիսոփայական երևույթի կարևորությունը, ներկայացվում են ներսերնդային արդարության և միջսերնդային արդարության միջև եղած տարբերությունները և անդրադարձ է կատարվում արդար

խնայողություններ կատարելու սկզբունքին՝ որպես սերունդների փոխհարաբերությունների կանոնակարգման դրսևորում:

Սոցիալական արդարությունն առավելապես վերաբերում է մարդկային համակեցության շրջանակներում սոցիալական, տնտեսական, քաղաքական և մշակութային կազմակերպումից բխող ռեսուրսների և հնարավորությունների անաչառ բաշխմանը: Այս իմաստով այն սերտորեն կապված է և գործառում է սոցիալական կառուցվածքների, փոխհարաբերությունների և ինստիտուտների շրջանակներում: Եվ քանի որ մարդկային համակեցությունը չի սահմանափակվում միայն ներկայում ապրող մարդկանց փոխհարաբերությունների կարգավորմամբ, կարելի է պնդել, որ սոցիալական արդարությունը ոչ միայն ուղղակիորեն վերաբերում է միջսերնդային փոխհարաբերություններին, այլև առանցքային նշանակություն է ստանում դրանց կանոնակարգման հարցերում:

Այս առումով կարևոր է նշել, որ «ներսերնդային արդարություն» եզրաբառը կիրառելի է մեկ սերնդի շրջանում հարաբերությունների առնչությամբ: Արդարության՝ միևնույն տարիքի մարդկանց շրջանում առաջացած խնդիրները, անկախ այն բանից, թե տվյալ մարդիկ ինչ ռասսայի, սոցիալական ինչ խմբի են պատկանում, ինչ ազգություն ունեն, վերաբերում են ներսերնդային արդարությանը: Ինքնին հասկանալի է, որ միջսերնդային արդարությունը ծավալային առումով ավելի ընդարձակ է: Վերջինս ներառում է ոչ միայն միաժամանակ գոյակցող տարբեր սերունդների (ծնող-երեխա), այլև նույն ժամանակահատվածում գոյություն չունեցող սերունդների (ներկա և ապագա սերունդներ) միջև եղած սոցիալական արդարությանն առնչակից հարցերը:

Այս համատեքստում արդար խնայողությունների սկզբունքը պահանջում է բավարար կապիտալ և ռեսուրսներ թողնել ապագա սերունդների համար: Սա սերունդների միջև արդարության երկփուլ ընկալում է. առաջինը կուտակման փուլն է, որտեղ արդար ինստիտուտների ստեղծման և պահպանման համար անհրաժեշտ նյութական հիմքի ապահովումը հավասարապես ու արդար կերպով բաշխված է տարբեր սերունդների միջև: Երկրորդը կայուն փուլն է, որտեղ խնայողություն այլևս չի պահանջվում, սակայն սերունդները պետք է պահպանեն այն, ինչը կուտակվել է:

Երկրորդ գլխի երրորդ՝ **«Սոցիալական կայունության հիմնախնդիրը միջսերնդային փոխհարաբերությունների համատեքստում»** ենթագլխում քննարկվում է սոցիալական կայունության դերն ու նշանակությունը սերունդների փոխհարաբերությունների համատեքստում, մասնավորապես փորձ է արված վերհանել սոցիալական կայունության և ապագա սերունդների հանդեպ պատասխանատվության առնչակցությունը, ցույց տալ սոցիալական կայունության կարևորությունը ապագա սերունդներին բարեկեցիկ կենսապայմաններ ավանդելու հարցում:

Համաշխարհայնացման արդի գործընթացների և սոցիոմշակութային փոխակերպումների իրականության մեջ կայունությունն անմիջականորեն ազդում է

սոցիալական համակարգերի թե՛ ներկա, թե՛ ապագա վիճակի վրա: Կատարելով համակարգապահպան գործառույթ՝ այն սոցիալական համակարգի ներքին անվտանգության, գոյապահպանման, ամբողջականության, ինչպես նաև զարգացման գրավականն է: Ինչպես արդեն պարզ է, կայունությունն էապես ազդում է սոցիալական համակարգի զարգացման, հետևաբար դրա երկարաժամկետ հուսալիության, անվտանգության ու ամբողջականության վրա: Ուստի սոցիալական կայունության գաղափարի քննարկումն առանձնակի ուշադրության է արժանանում ոչ միայն ներսերնդային, այլև միջսերնդային փոխհարաբերությունների տեսանկյունից: Եվ իզուր չէ, որ համակարգի կայունությունը, որպես կանոն, ենթադրում է ներկա և ապագա սերունդների շահերի և արժեքների համամասնական զարգացում:

Հարկ է նկատել, որ այս համատեքստում ուշադրության են արժանանում այնպիսի առանցքային խնդիրներ, ինչպիսիք են, օրինակ, սոցիալական ինստիտուտների բարենորոգումը ու դեպի ապագան ուղղված համապատասխան ռազմավարական մեխանիզմների որդեգրումն ու զարգացումը: Սակայն, ինչպես պարզվում է, սերունդներին կայուն կենսապայմաններ և հնարավորություններ ավանդելու տեսանկյունից՝ գոյություն ունեցող ինստիտուտների բարեկարգման ճանապարհին հանդիպող գլխավոր խոչընդոտներից մեկը սոցիալական համակարգերում ապագա սերունդների երկարաժամկետ խնդիրների հաշվին ներկայի կարճաժամկետ շահերին ու խնդիրներին առաջնահերթություն տալն է: Հանգամանք, որն ուղղակիորեն վտանգում է սերունդների միջև պատասխանատվության և փոխադարձության հարաբերությունները:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ եզրակացվել է, որ նման հանգամանքներում անհրաժեշտություն է առաջանում մշակել սոցիալ-քաղաքական ինստիտուտների այնպիսի կուռ համակարգ, որը կզբաղվի նաև ավելի երկարաժամկետ խնդիրների ուսումնասիրությամբ՝ որդեգրելով ապագա սերունդների օգտին միտված քաղաքականություններ: Պարզ է, որ նմանատիպ ինստիտուտների ստեղծումն ու գործարկումը հեշտ հանձնառություններ չեն: Սրանք կլինեն այն ինստիտուտները, որոնք նպատակ կունենան շտկել սոցիալ-քաղաքական համակարգերի կարճաժամկետ կողմնակալությունը և ստեղծել քաղաքականության այնպիսի վերջնարդյունքներ, որոնք ավելի լավ են հավասարակշռություն ապահովում ներկայի մտահոգությունների և ապագա սերունդների շահերի միջև:

Եզրակացությունում ամփոփվում են ատենախոսության արդյունքները, կատարվում տեսական ընդհանրացումներ, որոնց հիման վրա առանձնացվել են հետևյալ դրույթները՝

- Եթե ավանդական հասարակություններում կյանքի կազմակերպման մշակույթն անցյալից ավանդվող պատմական հիշողության, պատումների, բարքերի ու ավանդույթների ուժով վերարտադրվում ու կանոնակարգում էր հաջորդ սերնդի կյանքը,

ապա արագ փոփոխվող և սոցիոմշակութային հիմնարար փոխակերպումների ենթարկվող ժամանակակից աշխարհում նախորդ սերունդների համակեցության գոյաբանական կարգի պարզ վերարտադրությունն այլևս չի կարող նպաստել սոցիալական կյանքի կայունությանն ու կենսունակությանը, ինչն էլ իր հերթին նշանակում է, որ անհրաժեշտ է համակեցության գոյաբանական նախորդ կարգը արդիականացնել և համապատասխանեցնել սոցիոմշակութային նոր պայմաններին:

- Ուսումնասիրելով հետարդիականության մեր ժամանակներում տեղի ունեցող քաղաքակրթական և սոցիոմշակութային արմատական փոխակերպումները ու դրանց հետևանքները սոցիալական կյանքի կազմակերպման և սերունդների ինքնության կառուցարկման գործընթացներում՝ եզրակացվում է, որ նման իրողություններում ինքնության շարունակականության հիմնախնդիրը ձեռք է բերում տեսական և գործնական նոր հնչեղություն: Եվ այս համատեքստում մեզանում խնդիր է դառնում անցյալի հետ կառուցողական երկխոսության և ռեֆլեքսիվ վերանայման մշակույթի ձևավորումը:
- Սերունդների ինքնության և համակեցության գոյաբանական կարգի սոցիոմշակութային առանձնահատկությունները քննարկելով պատմամշակութային փոխակերպումների համատեքստում՝ առանձնացվել են սերունդների համակեցության մշակույթի երեք հիմնական տիպեր. 1) ավանդապաշտական, որը կրկնվող ակնկալիքների և դրանց բավարարման ցիկլով գործառող մշակույթի շրջանաձև մոդել է, որտեղ սերունդների ինքնությանն ու համակեցությանը վերաբերող յուրաքանչյուր հարցի պատասխան, որպես կանոն, կանխորոշված է նախնիների կենսափիլիսոփայությամբ, 2) մոդեռնիստական (արդիական), որի շրջանակներում սերունդների համակեցությունը կարգավորող գործոններ են դառնում ժամանակակիցների կենսադիրքորոշումները, պատկերացումներն ու վարքաձևերը, 3) հետմոդեռնիստական (հետարդիական), որտեղ սերունդների միջև կապերը խզված են, և փոխհարաբերությունների կանոնակարգման հարցում չկան կայուն կողմնորոշիչներ ու համոզմունքներ:
- Վերլուծելով սերունդների համակեցության գոյաբանական կարգում անցյալի և ներկայի ժառանգական կապի դինամիկան՝ եզրակացվել է, որ պատմական հիշողությունը սերունդների ինքնության և համակեցության շարունակականության հիմնական միջոցներից մեկն է, որի օգնությամբ օրգանական կապ է հաստատվում անցյալի և ներկայի միջև՝ նպաստելով պատմական գիտակցության և մշակութային ժառանգության պահպանմանն ու փոխանցմանը: Միևնույն ժամանակ պատմական հիշողությունն ինքնին ոչ թե տեղեկատվության պասիվ համակարգ է, այլ ընտրողական և մեկնողական անվերջ գործընթաց, որի ընթացքում անցյալը վերաիմաստավորվում է՝ հարմարեցվելով ներկայի սոցիոմշակութային պահանջներին:

- Հաշվի առնելով մարդկության առջև ծառացած արդի մարտահրավերներն ու վերջիններիս երկարաժամկետ հետևանքները, ինչպես նաև սոցիալ-տնտեսական, քաղաքական, բնապահպանական, առողջապահական և այլ բնագավառներում տեղի ունեցող իրադարձությունների անկանխատեսելիությունը՝ սերունդների միջև պատասխանատու կախվածության գիտակցության ձևավորումը առաջնահերթ կարևորություն է ձեռք բերում: Այս իմաստով պատասխանատու կախվածությունը, անկախ սերունդների տարաճաժամանակային տեղակայումից, արդի իրողություններում հանդես է գալիս որպես համակեցության կարևոր նախապայման՝ ապահովելով տվյալ սոցիոմշակութային կարգի գործառության արդյունավետությունը:
- Սոցիալական արդարության հիմնախնդիրն առանցքային նշանակություն ունի միջսերնդային փոխհարաբերությունների կանոնակարգման գործում, քանի որ ժամանակակից աշխարհի իրողությունները ենթադրում են սերունդների միջև փոխադարձ պատասխանատվության, ինչպես նաև ռեսուրսների և հնարավորությունների անաչառ բաշխման անհրաժեշտություն: Այս կապակցությամբ եզրակացվել է, որ արդար խնայողությունների սկզբունքը, չնայած ներքին հակասություններին և գործնական դժվարություններին, միջսերնդային փոխհարաբերությունների կանոնակարգման հարցում մեծ նշանակություն է ձեռք բերում: Այն ոչ միայն խորությամբ բացահայտում է միջսերնդային արդարության՝ որպես սոցիալ-փիլիսոփայական հիմնախնդրի էությունը, այլև կարող է հիմք ծառայել սոցիալական ինստիտուտների բարենորոգման և սոցիալ-քաղաքական համակարգային բարեփոխումների համար:
- Սոցիալական կայունությունը դիտարկվում է որպես ապագա սերունդների բարեկեցության ապահովման կարևոր գործոն, որովհետև դրա առկայությունը մարդկային գործունեության ամենատարբեր ոլորտներում անհրաժեշտ է ոչ միայն ներկա, այլև ապագա սերունդների կարիքները բավարարելու համար: Եվ պատահական չէ, որ համատարած փոփոխությունների հունով ընթացող արդի աշխարհում սոցիալական կայունության մասին մտորումները պահանջում են ոչ միայն անհատական մակարդակում համապատասխան գործողություններ, այլև ինստիտուցիոնալ մոտեցում: Խոսքը սոցիալ-քաղաքական ինստիտուտների բարենորոգման կամ այլ կերպ ասած՝ դրանք համապատասխան գործիքակազմով վերազինելու և արդիականացնելու մասին է: Այսպիսի ինտիտուտները համապատասխան միջավայր կստեղծեն ապագայամետ քաղաքականությունների ձևավորման և իրագործման համար՝ կարճաժամկետ մտածողությունից անցում կատարելով դեպի ավելի երկարաժամկետ ուղղվածություն ունեցող խնդիրների լուծումներ որոնելուն:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. **Սիմոնյան Հ.,** «Պատմական հիշողությունը որպես սերունդների ինքնության շարունակականության սոցիոմշակութային տեքստ» // «Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն», № 3(45), Եր., 2024, էջ 48-60:
2. **Սիմոնյան Հ.,** «Կյանքի կազմակերպման մշակույթը որպես սերունդների փոխհարաբերությունների ինստիտուցիոնալ նախագիծ» // «Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն», № 1(43), Եր., 2024, էջ 18-28:
3. **Simonyan H.,** "The Problem of Vertical and Horizontal Identity in Intergenerational Relationships", Bulletin of Yerevan University: Philosophy, Psychology, № 2(41), Yerevan, 2023, pp. 58-67.
4. **Սիմոնյան Հ.,** «Ինքնության շարունակականության հիմնահարցը միջսերնդային երկխոսության պայմաններում», // «Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն», № 1(40), Եր., 2023, էջ 29-43:
5. **Սիմոնյան Հ.,** «Կայունությունը միջսերնդային հարաբերությունների համատեքստում», // «Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն» № 2(38), Եր., 2022, էջ 51-62:
6. **Սիմոնյան Հ.,** «Ջոն Ռոլսի «Արդարությունը որպես անաչառություն» հայեցակարգի անկյունաքարերը. ուտիլիտարիզմի և ինտուիցիոնիզմի քննադատությունը» // ՎՊՀ Գիտական տեղեկագիր, Պրակ Ա, № 2, «ՎԱՌՄ ՍՊԸ», Երևան, 2021, էջ 427-438:
7. **Սիմոնյան Հ.,** «Միջսերնդային արդարության հղացքը և դրա ձևավորման նախադրյալները» // ՎՊՀ Գիտական տեղեկագիր, Պրակ Ա, № 1, «ՎԱՌՄ ՍՊԸ», Երևան, 2021, էջ 163-172:
8. **Սիմոնյան Հ.,** «Միջսերնդային արդարության հղացքը Ջոն Ռոլսի արդարության տեսությունում» // ՇՊՀ Գիտական տեղեկագիր, Պրակ Բ, № 2, Գյումրի, 2020, էջ 129-139:

Симонян Гамлет Сергеевич

КУЛЬТУРА ОРГАНИЗАЦИИ ЖИЗНИ КАК ОНТОЛОГИЧЕСКИЙ ПОРЯДОК СОСУЩЕСТВОВАНИЯ ПОКОЛЕНИЙ

Диссертация на соискание ученой степени кандидата философских наук по специальности 09.00.01 – “Философия”.

Защита состоится 4 июня 2025 г., в 15:00 на заседании специализированного совета Философии и социологии 013 ВАК в Ереванском государственном университете по адресу: 0025, г. Ереван, ул. Абовяна 52а, ЕГУ

РЕЗЮМЕ

В современном мире радикальных цивилизационных и социокультурных трансформаций организация общественной жизни и сосуществования также стремительно меняется и приобретает новые формы трансформации, в результате чего меняются убеждения и представления людей, нормативные и ценностные системы сосуществования, что требует новой интерпретации цивилизационных и социокультурных особенностей онтологического порядка сосуществования поколений в контексте происходящих изменений и порождаемых ими вызовов.

В этом контексте переосмысление и актуализация философии жизни, культуры организации жизни предыдущих поколений и/или их отдельных элементов, которые ранее играли системообразующую и системосохраняющую роль, становятся ключевыми предпосылками для формирования жизненного мира поколений и обеспечения непрерывности их сосуществования. Не случайно, что в эпоху постмодернизма комплексное изучение культуры организации и регулирования сосуществования поколений, а также критический анализ связанных с этим идей и точек зрения приобрели большую значимость.

В современном мире культура организации жизни предков и институциональные системы, структурирующие общественную жизнь, с одной стороны, оказались перед необходимостью модернизации, а с другой стороны, обязаны сохранять и передавать будущим поколениям основы социальной идентичности. То есть сложилась ситуация, при которой для диалога поколений и преемственности идентичности необходимо не только сохранять и защищать жизненные ценности, составляющие основное содержание идентичности, но и модернизировать их. В этом смысле роль и значение культуры организации жизни еще больше возрастают, поскольку в указанной ситуации

возникает необходимость в распространении культуры жизни, которая будет с уникальным балансом выполнять функцию объединения прошлого и настоящего и намечать онтологический проект будущего. Очевидно одно: определение места, роли и значения культуры в организации жизни дает возможность переосмыслить соотношение старого и нового, а точнее, – прошлого, настоящего и будущего: проблема, которая всегда была и остается актуальной.

В результате социокультурных, антропологических и цивилизационных трансформаций возникает необходимость в определении онтологического проекта будущего в логике новых социокультурных условий, в которых сосуществование поколений, социальная стабильность, справедливость и ответственность между поколениями будут способствовать укоренению не какой-то временной или условной реальности, а долгосрочного онтологического порядка. Более того, беспрецедентный технологический рост, зафиксированный в последние годы, расширение масштабов деструктивной деятельности человека, борьба за принятие надлежащей социально-политической, образовательной, культурной политики на местном, региональном и международном уровнях также безоговорочно свидетельствуют о том, что современная цивилизация стоит перед проблемой создания условий ответственности, стабильности и справедливости между поколениями.

Необходимо отметить, что изучение и определение социокультурных особенностей культуры организации жизни в современном армянском обществе приобретают дополнительную актуальность в свете происходящих в стране социально-политических процессов. Сегодня характер решений в социокультурной сфере, упущения в ориентации социальных институтов на будущее, важность эффективности долгосрочных последствий реформ, проводимых в системе образования, свидетельствуют о безотлагательности разработки онтологического проекта, ориентированного на устойчивое будущее, и обеспечения условий жизни для сосуществования между поколениями.

Важно отметить, что предстоит проделать огромную работу по изучению и содержательному анализу особенностей идентичности и культуры организации жизни армянского народа. В этом смысле обращение к определенным элементам культуры жизни, а также идентичности армянского народа может не только способствовать выяснению национальных особенностей армянского народа, но и стимулировать новое осмысление современных проблем и процессов, связанных с идентичностью и культурой организации жизни поколений.

Simonyan Hamlet Sergey

THE CULTURE OF LIFE ORGANIZATION AS AN ONTOLOGICAL ORDER FOR COHABITATION OF GENERATIONS

Dissertation for the Receiving Academic Degree of Candidate of Philosophical Sciences under the specialty 09.00.01 "Philosophy".

The defense will take place on June 4, 2025, at 15:00 at Yerevan State University, at the committee meeting of Philosophy and Sociology with the specialty of HCC 013
Address: 52a Abovyan str., Yerevan, 0025, YSU

ABSTRACT

In the modern world of radical civilizational and socio-cultural transformations, the organization of social life and settings of cohabitation are also rapidly changing and taking on new transformations, as a result of which people's beliefs and perceptions, normative and value systems of cohabitation are also changing, which requires a new interpretation of the civilizational and socio-cultural features of the ontological order for cohabitation of generations in the context of ongoing changes and the challenges they pose.

In this context, reinterpreting and modernizing the philosophy of life, culture of life organization and/or its key elements, which once shaped and sustained social systems, become prerequisites for constructing the generational lifeworld and ensuring the continuity of cohabitation. Therefore, it is no coincidence that in our postmodern era, the comprehensive study of the culture of organizing and regulating the cohabitation of generations, along with the critical analysis of the ideas and viewpoints circulating in this regard, has gained renewed significance.

In the contemporary world, the culture of life organization and the institutional systems structuring social life of ancestors have, on one hand, encountered the necessity of modernization, and on the other hand, are obligated to preserve and pass on to future generations the foundations of social identity. In this sense, the role and significance of the culture of life organization are further emphasized, as in the above-mentioned situation there is a need to circulate a culture of life that will function with a balance of connecting the past and present while outlining an ontological project for the future. One thing is clear: determining the role and importance of the culture of life organization provides an opportunity to reassess the relationships between the old and the new, or more precisely, between the past, present, and future - a problem that has always been and remains relevant.

As a result of socio-cultural, anthropological, and civilizational transformations, it has become necessary to outline an ontological project for the future within the framework of new socio-cultural conditions, in which the ideas of sustainability, as well as responsibility and justice between generations, will contribute not to a temporary or conditional reality, but to the establishment of a long-term ontological order. Furthermore, the rapid technological advancements in recent years, the growing scale of human destructive actions, and the ongoing competition at local, regional, and global levels to implement suitable socio-political, educational, and cultural policies clearly show that our contemporary civilization is facing a challenge of establishing conditions for intergenerational responsibility, sustainability, and justice.

One must note that the study and determination of the socio-cultural peculiarities of the culture of life organization in contemporary Armenian society gain additional urgency in light of ongoing socio-political processes in the country. Today, the nature of decisions in the socio-cutlural sphere, the shortcomings in the future-oriented direction of social institutions, and the emphasis on the long-term effectiveness of reforms in the education system all point to the urgency of developing an ontological project aimed at a sustainable future and ensuring the conditions for cohabitation of generations.

It is crucial to point out that there is still a great deal of work to be done in terms of studying and analyzing the peculiarities of the Armenian identity and culture of life organization. In this regard, addressing certain elements of culture of life and identity of the Armenian nation can not only contribute to shedding light on the national pecularities, but also stimulate a fresh interpretation of contemporary issues and processes related to identity and culture of life organization of generations.